Վերջին փոփոխությունները՝

26.01.2023

ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Գաղտնիության քաղաքականությունը մշակվել է «ԷԿԵՆԳ» ՓԲԸ (այսուհետ՝ Մենք) կողմից և նախատեսված է այն քաղաքացիների (այսուհետ՝ օգտվող, Դուք) համար, ովքեր օգտվում են սույն xID Armenia հավելվածից (այսուհետ՝ Հավելված) և հետաքրքրված են, թե ինչպես են իրենց անձնական տվյալները օգտագործվում դրանք մշակողների կողմից:

«ԷԿԵՆԳ» ՓԲԸ հանդիսանում է հավելվածի օպերատորը և Հայաստանում հավատարմագրված հավաստագրման կենտրոնը, որը քաղաքացիների համար թողարկում է էլեկտրոնային ստորագրության և էլեկտրոնային նույնականացման հավաստագրեր:

Խնդրում ենք կարդալ ուշադիր:

1. Ներածություն

Հավելվածում գրանցվելու և հետագայում հավելվածից օգտվելու ժամանակ մեզ անհրաժեշտ են լինում անձնական տվյալներ որակյալ ծառայություններ մատուցելու համար: Մենք մշակել ենք անձնական տվյալների նվազագույն ցանկը, որն անհրաժեշտ է, որպեսզի ծառայության մատուցումը դառնա հնարավոր:

Գրանցվելու ընթացքում մենք ձեռք ենք բերում Ձեր հանրային ծառայությունների համարանիշը, որը հիմք է դառնում հավաստագիր թողարկելու համար:

Այսպես. Հավելվածում գրանցվելու համար կարող եք ընտրել հետևյալ նույնականացման ձևերից որևէ մեկը՝

ա) Հավելվածում անձը հաստատող տվյալներ ներկայացնելու և կենդանության ստուգում անցնելու միջոցով,

դ) Օպերատորի գրասենյակ այցելելու միջոցով:

2. Իրավական հիմքեր

Էլեկտրոնային թվային ստորագրության կիրառումը կարգավորվում է «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքով, որով ամրագրվում է, որ էլեկտրոնային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն

իրավական նշանակությունը, ինչ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը:

Հավելվածի գործարկման իրավական հիմքերն են ՀՀ օրենքը «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 25-ի N 572-Ն որոշումը:

Ձեր անձնական տվյալները մշակվում են «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքին համապատասխան: Անձնական տվյալների մշակման, պահպանման և արխիվացման գործընթացներն իրականացվում են ՀՀ օրենսդրությանը և այլ իրավական ակտերին, ինչպես նաև ՀՀ արդարադատության նախարարության անձնական տվյալների պաշտպանության գործակալության կողմից մշակված՝ «Պետական մարմինների կողմից անձնական տվյալների մշակման» ուղեցույցին համապատասխան:

3. Տվյալների հավաքում

Հավելվածում գրանցման ընթացում Դուք տրամադրում եք հետևյալ տվյալները.

- Անուն Ազգանուն
- Ծննդյան ամսաթիվ
- Անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր, կենսաչափական անձնագիր, նույնականացման քարտ)
- լուսանկար
- դեմքի կենսաչափական տվյալներ
- բջջային հեռախոսահամար

Վերը ներկայացված տվյալների մշակման համար մենք պարտադիր պետք է ունենանք տվյալների սուբյեկտի համաձայնությունը, ինչը ստացվում է սուբյեկտի կողմից հավելվածում «Հաստատել» կոճակը սեղմելու դեպքում:

Կենդանության ստուգում անցնելով հավելվածում գրանցվելու դեպքում Դուք համաձայնում եք Ձեր կենսաչափական տվյալների մշակման հետ: Կենսաչափական տվյալը ներառում է Ձեր հեռախոսի տեսախցիկի միջոցով տեսագրությունից ձեռքբերված Ձեր դեմքի պատկերը:

Կենսաչափական տվյալներ չեն մշակվում գրանցման այլ եղանակներ ընտրելու պարագայում:

Ներկայացված տվյալների հիման վրա ԷԿԵՆԳ ՓԲԸ կողմից թողարկվում են երկու հավաստագրեր, որոնցից մեկը՝ էլեկտրոնային ստորագրության, իսկ մյուսը էլեկտրոնային նույնականացման համար:

Հավաստագրերի կոդերը սահմանում եք Դուք գրանցվելու ընթացքում և դրանք որևէ տեղ չեն պահպանվում:

Ձեր կողմից ներկայացված տվյալները ստուգվում են ՀՀ Ոստիկանության Բնակչության պետական ռեգիստրում գրանցված տվյալների հետ:

Մենք պահպանում ենք հետևյալ տվյալները.

- Ձեր ՀԾՀ,
- Բջջային հեռախոսահամար,
- Վայր, որտեղից մուտք եք գործել հավելված,
- Մուտք գործելու փորձերի (հաջողված և անհաջող) ամսաթիվ և ժամ, IP հասցեներ,
- Սարքավորման տեսակ:

4. Տվյալների անվտանգություն

Ձեր անձնական տվյալներին հասանելիություն ունեն սահմանափակ թվով աշխատակիցներ՝ ելնելով իրենց գործառութային պարտավորություններից: Մեր կողմից կիրառվում են տվյալների հավաքման, պահպանման և մշակման համապատասխան եղանակներ և անվտանգության միջոցներ՝ տվյալները անօրինական միջամտությունից, փոփոխումից, բացահայտումից կամ ոչնչացումից պաշտպանելու ուղղությամբ: Ձեր կողմից տրամադրված անձնական տվյալները օգտագործվելու են բացառապես ծառայողական կամ աշխատանքային նպատակներով, և այն չի օգտագործվելու անձնական կամ որևէ այլ նպատակով:

Հավելվածի պատշաճ գործարկման շրջանակներում Մենք կարող ենք հայցել հասանելիություն ունենալ Ձեր բջջային հեռախոսի որոշ գործառույթներին՝ ներառյալ հեռախոսի տեսախցիկին և խոսափողին՝ կենդանության ստուգում (Liveness check) իրականացնելու նպատակով: Եթե ցանկանում եք փոփոխել տրամադրված հասանելիությունները, ապա կարող եք դա անել Ձեր հեռախոսի կարգավորումներում:

Եթե կարծում եք, որ անձնական տվյալների պաշտպանության հարցում խախտվել է Ձեր իրավունքը, կարող եք ներկայացնել բողոք ՀՀ արդարադատության նախարարության Անձնական տվյալների պաշտպանության գործակալություն՝ ուղարկելով նրանց Ձեր պահանջը:

5. Երրորդ կողմ

Պետական, տեղական ինքնակառավարման մարմինների կամ ծառայություններ մատուցող այլ մարմինների հարթակներում (Երրորդ կողմ) Հավելվածի հաջող նույնականանալու (հարթակ մուտք գործելու) դեպքում Մենք Երրորդ կողմին ենք փոխանցում Ձեր Հանրային ծառայությունների համարանիշը:

6. Փոփոխություններ Գաղտնիության քաղաքականության մեջ

Սույն գաղտնիության քաղաքականությունը կարող է թարմացվել՝ ելնելով իրավական, կարգավորող կամ գործառնական պահանջների փոփոխություններից: Մենք Ձեզ կտեղեկացնենք ցանկացած փոփոխության մասին՝ փոփոխելով սույն փաստաթղթի «Վերջին փոփոխությունները» ամսաթիվը: Խրախուսում ենք Ձեզ պարբերաբար վերանայել այս Գաղտնիության քաղաքականությունը՝ թարմացումների մասին տեղեկացված լինելու համար:

Սույն համաձայնության գործողության ժամկետն ավարտվում է Հավելվածը և դրա մեջ պարունակվող բոլոր տվյալները Ձեր բջջային հեռախոսից ջնջելու, ինչպես նաև օպերատորին Ձեր հաշվի ապաակտիվացման մասին դիմում ներկայացնելու հետ մեկտեղ: Մինչ ապակտիվացումը Ձեր կողմից կատարված գործողությունների վերաբերյալ լոգը պահպանվում է օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

7. Հետադարձ կապ

Եթե ունեք հարցեր կամ մեկնաբանություններ Գաղտնիության քաղաքականության վերաբերյալ, կարող եք կապ հաստատել մեզ հետ հետևյալ տվյալներով՝

«ԷԿԵՆԳ» ՓԲԸ

ՀՀ, ք. Երևան 0010, Տիգրան Մեծի 4, 5-րդ հարկ

+374 60 460405

info@ekeng.am